Միացեալ Նահանգներ փաստօրէն արդէն ձեւաւորած են իրաքի ժամանակաւոր կառավարութիւնը եւ մշակած են սահմանադրութեան նախագիծ մը: Ինքնին հասկնալի է, թէ ինչ կը նշանակեն այսպիսի քայլեր միջազգային իրաւական առումով: Հասկնալի են նաեւ Ռուսիոյ եւ իր արեւմտաեւրոպական ընդդիմախօսներուն իրաքի յետպատերազմեան կարգաւորման տուեալ մտտերն իրականացման մասնակիցը դարձնելու Միացեալ Նահանգներու ներկայ փորձերը: Տուեալ շրջադիմին մէջ անհասկնալի կը մնայ միայն մէկ բան՝ Միացեալ Նահանգներու ընդդիմախօսներուն պատասխանը, որմէ ալ որոշ չափով կապուած պիտի ըլլայ այն հարցումը, թէ ի՞նչ տեսք պիտի ունենայ միջազգային ամբողջ իրաւակարգը Իրաքի պատերազմէն ետք:

Ակնյայտ է, որ Միացեալ Նահանգներու քայլերուն օրինակներու ձեւակերպումը պարագային ալ Իրաքի պատերազմին հակառակորդները առայժմ չունեն անոնց հետագայ ծաւալման դիմակայելու որեւէ գործօն մեքանիզմ: Ուստի Իրաքի խնդիրը լուծելէ ետք Միացեալ Նահանգներ պիտի շարունակեն ամբողջ աշխարհի մէջ նորոգող Մատնանքեր փնտռելու գործընթացը՝ քաղաքական ու ֆինանսատնտեսական լծակներով, իսկ առանձին պարագաներու՝ նոյնիսկ ուժի գործադրումով, հասնելու իրեն համար անընդունելի վարչակարգերու փոփոխութեան ոչ միայն իսլամական աշխարհին մէջ, այլ նաեւ՝ անոր սահմաններէն դուրս:

Տուեալ շրջադիմին մէջ պէտք է դիտարկել ոչ միայն Իրաքի դրացիներուն՝ Իրանի, Մեքուսական Արաբիոյ ու Սուրիոյ, այլ նաեւ Հիւսիսային Գործաչի եւ նոյնիսկ Պիեթրոսուրիոյ հասցնելու Ուաշինկթընէն հնչող սպառնալիքներն ու նախագրուած շարժումները, որոնցմէ շատերը արդէն սկսած են յստակ քայլերու վերածուիլ՝ տուեալ երկրներուն դէմ ուղղուած ճնշումներու տեսքով: Այս հաւանական թիրախներուն դէմ Միացեալ Նահանգներու հետագայ քայլերուն ծաւալման կշռոյթն ու յաջողակութիւնը մեծապէս կախուած ընդին անկէ, թէ ինչպիսի՞ իրական գին պիտի վճարեն Իրաքի պատերազմը նախաձեռնած երկրները՝ զինուորական, որուն շարքին մարդկային կորուստներու, ֆինանսական ծախսերու, Իրաքի ներքին ազգային ու կրօնական խնդիրներու լուծման, ինչպէս նաեւ՝ ամբողջ աշխարհի մէջ ուժեղացող զիմադրութեան այլքը սանձելու իմաստով:

Սակայն, ինչպիսին ալ որ ըլլայ յետպատերազմեան Իրաքի ճակատագիրը, այսօրուին կարելի է արձանագրել, որ Իրաքը իւրայատուկ փորձաքար մըն է՝ ոչ միայն Մերձաւոր եւ Միջին Արեւելքի, այլեւ՝ ամբողջ աշխարհի հետագայ ճակատագիրը որոշելու իմաստով:

ԳԵՐՈՂ ԽՈՒԳԻՆԵԱՆ

«Հայոց Աշխարհ» (Արեւմտահայերէնի վերածուած)

(Յապաւու մենքրով)





# Կնոջական

## Փորձ - ՇԱՐՅԱՐԱՆ

### ՋՂԱՅԻՆ ԷՔ

Ջղայնությունը կաթի կը նմանի... մէկ անգամէն կը փրփրի ու կը բարձրանայ, բայց կրնանք արգելիլ անոր յորդիլը:

Իմանալու համար ձեր ջղայնութեան աստիճանը, պատասխանեցէ՛ք հետեւեալ փորձ - հարցարանին, ապա կարդացէ՛ք արդիւնքը:

1

Ստորեւ 3 կացութիւններէն ո՞ր մէկը ամէնէն աւելի կը զայրացնէ ձեզ:

ա.- Երեխայի մը ճշոցը:

բ.- Անարդարութիւն մը:

գ.- Ձեր գործերուն կուտակումը:

2

Եթէ հանրախանութի մը մուտքին ուղեւ ձեր պայուսակը խուզարկել:

ա.- Վիրաւորուած կը զգար:

բ.- Բնական կը զսնէ՞ք՝ մտածելով, որ պաշտօնեան իր պարտականութիւնը կը կատարէ:

գ.- Կը վախնաք եւ կը մտահոգուիք:

3

Ձեր բարեկամը չի յարգեր ժամադրութիւնը եւ կ'ուշանայ:

ա.- Առիթնէն կ'օգտուիք խանութներուն ցուցափեղկերը դիտելու:

բ.- Կ'անհիծէք այն պահ, որ ժամադրուեցաք:

գ.- Կը համբերէք, ի վերջոյ բանաւոր պատճառ մը կրնայ ունենալ...

4

Ինքնաշարժի խնդրումի մը մէջ բանտարկուած մնացած էք:

ա.- Կոպտօրէն կը բողբոջէք:

բ.- Առիթնէն կ'օգտուիք բլիթայինով ձեր բարեկամը հրահրելու որպէս խնդրանք համար:

գ.- Ձայնափութը կը բանաք եւ կը սպասէք:

5

Շարժափեղկի հաճելի ծրագիր մը վերջին վայր:

## ԽՈՒՍՏԻՐ

### ԲԱՆՋԱՐԵՂԵՆՈՎ ԼԵԶՈՒԱԶՈՒԿ

Շարժափեղկի երեկոյեան խոստում է: Հայկական աւանդութեան համաձայն, պայման է, որ ընթրիքի սեղանին վրայ ըլլան կարմիր հակիթ, ձկնեղջիւր, եղինձ, շոմին տապակուած հակիթ, մածուցով կամ կաթով եփած կորկոտ...



Այսօրուան էջով կու տանք բանջարեղենով լեզուաձուկի (sole) պատրաստութիւնը, եթէ մտադրած էք խոստումին նաեւ ձուկ պատրաստել եւ հրամցնել:

- Բաղադրութիւն՝ 4 անձի համար
  - 4 լեզուաձուկ՝ մաշկը հանուած
  - 4 ստեպլին
  - 4 պղտիկ գետնախնձոր
  - 2 կարոսի (celeris) ցօղուն
  - 2 կանաչ սոխ
  - 1 ապուրի դգալ մանրուած ազատքեղ
  - 75 սանթիլիթր խտացուած բանջարեղէնի ջուր
  - 15 սանթիլիթր ճերմակ գինի
  - 150 կրամ կարագ
  - Աղ, սեւ փռի պղպեղ
- Պատրաստութիւն
- Ձկնալվաճառէն խնդրել, որ լեզուաձուկերը մաքրէ եւ մորթերը հանէ: Ստեպլիները մաքրել եւ 5 սմ երկայնքով կտրտել: Կեղուել եւ լուալ գետնախնձորները:
- Կարոսի ցօղունները չորսի բաժնել, ապա բոլոր բանջարեղէնները 15 վայրկեան եփել աղի ջուրի մէջ, քամոցէ անցնել եւ տաք պահել:
- Ձուկերը 5 վայրկեան եռացնել խտացուած բանջարեղէնի ջուրին մէջ, զգուշութեամբ հանել ձուկերը եւ դարձեալ տաք պահել:
- Կանաչ սոխը մանրել եւ ճերմակ գինիին եւ 15 սանթիլիթր բանջարեղէնի ջուրին հետ կրակին վրայ եփել, մինչեւ որ հեղուկը մէկ երրորդով պակսի:
- Քիչ - քիչ աւելցնել կարագը եւ գարնել, ապա աւելցնել աղն ու համեմը, վերջապէս՝ քամոցէ անցնել:
- Լեզուաձուկերը դնել տաք պնակներու մէջ, վրան ձածկել թացանով, ապա զարգարել մանրուած ազատքեղով:
- Իւրաքանչիւր լեզուաձուկի կողքին դնել այլազան բանջարեղէններ եւ անմիջապէս հրամցնել:
- Բարի՛ ախորժակ:



Կեանքի կը ստիպուիք ջնջել եւ տունը մնայ:  
ա.- Կը մտածեցէ՞ք՝ յաջորդ շաբթուան կրնաք յետաձգել ձեր ծրագիրը:  
բ.- Կը նեղուիք եւ կ'որոշէք քէն պահել բոլորին հետ:  
գ.- Կ'որոշէք ձեր տրամադրութիւնը չխանգարել:

Ձեր գործերը կուտակուած են, վայրկեանները համրուած են, եւ յանկարծ մէկը կը խանգարէ ձեզ:  
ա.- Ձինք կը ճամբէք՝ ձեր կացութիւնը բացատրելով:  
բ.- Կ'որոշէք քանի մը վայրկեան գինք լսել:  
գ.- Կը մտածէք՝ գործը կրնայ սպասել:

Ձաշ կը պատրաստէք եւ յանկարծ ընտանիքին անդամներէն մէկը ձեռքը կ'երկարէ կաթսային մէջէն բան մը առնելու համար:  
ա.- Փայտեայ դգալով անոր ձեռքին կը զարնէք:  
բ.- Խօսքով, շատ կտրուկ կ'արգիլէք:  
գ.- Կը ձգէք՝ մտածելով, որ ձեր պատրաստածը շատ ախորժաբեր է:

Ձեր մայրը երրորդ անգամ ըլլալով կը հեռաձայնէ ձեր առողջութիւնը հարցնելու:  
ա.- Կը փորձէք հանգրտ ձեռնալ եւ կը պատասխանէք անոր հարցումներուն:  
բ.- Շատ կտրուկ՝ ձեր զրաղած ըլլալը կը յայտնէք եւ կը խնդրէք, որ կրկին չհեռաձայնէ:  
գ.- Կը խնդրէք, որ աւելի ուշ հեռաձայնէ:

	1	2	3	4	5	6	7	8
ա	3	1	2	1	3	1	1	3
բ	1	3	1	2	1	2	2	1
գ	2	2	3	3	2	3	3	2

#### ԱՐԴԻՒՆԷ

- Եթէ 1էն 18 կէտ հաւաքած էք, այն տպաւորութիւնը ունիք, որ ուրիշները ձեզ չեն հասկնար, շատ հաւանաբար պատճառը այն է, որ այս շրջանին շատ չըզայնիք էք: Ձեր կարողութիւնէն վեր գործերու մի՛ ձեռնարկէք, ձեր գործերը դասաւորեցէք եւ աւելի ծրագրուած աշխատեցէք: Ձեր շրջապատին հետ աւելի ներողամիտ վարուեցէք եւ ջանացէք հարցերը թեթեւի առնել:
- Եթէ 9էն 16 կէտ հաւաքած էք, որոշ բաներ կը ջղայնացնեն ձեզ, բայց գիտէք լարուածութիւնները դիմազրուել եւ չփրփրիլ եւ որոշ իրապաշտութեամբ վերլուծել հարցերը: Ձեր նշանաբանն է՝ ոմանց ազատութիւնը կը վերջանայ հոն, ուր ուրիշինը կը սկսի: Ընկերութեան մէջ սիրուած եւ փնտրուած էք եւ կը համարուիք հաւասարակշռուած անձ մը:
- Եթէ 17էն 24 կէտ հաւաքած էք, ձեր շիջելուն տէր, գուսպ եւ օրինակելի անձ էք: Ձեր հանգրտութիւնը վարակելի է, գիտէք դժուար կացութիւնները դուրս գալ տուեց զայրաբալու, նոյն ատեն նիշդ եւ արդար լուծումներ գտնելով: Տան համերաշխութիւնը ու խղաղութիւնը պահպանող էք, գործի մէջ՝ օրինակելի գործընկեր, այլ խօսքով՝ երանելի անձ մը:

### ԱԿԱԳ ՇԱԲԹՈՒԱՆ ԱՌՆՁՈՒՈՂ ՅԱՅԿԱԿԱՆ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աւագ Շաբթուան օրերէն իւրաքանչիւրը ունի իր անունը, եւ երեխաներն անգամ սորված էին այդ անունները՝  
Քոռ Երկուշաբթին,  
Շիլ Երեքշաբթին,  
Չիք Չորեքշաբթին,  
Աւագ Կինգշաբթին,  
Յուդայի Ուրբաթ,  
Չատիկի Շաբաթ,  
Կարմիր Կիրակի

Աւագ Ուրբաթ օր լոռեցիներուն մօտ արգիլուած էին՝ ծուկնի գալ, որովհետեւ Զրիստոսը խաչին է, խաչակնքելը, որովհետեւ Զրիստոսը խաչուած է, դրամ փոխ տալ կամ առնելը, որովհետեւ Զրիստոսը դրամի համար մատնուած է: Ջաւախքի մէջ արգիլուած էին՝ մուրճ բարձրացնելը, որովհետեւ մուրճով գամած են Զրիստոսին անդամները, փայտ յղկելը, որովհետեւ Զրիստոսի խաչափայտը տաշուած էր:

ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ  
ջաղացապաններու օրն էր, քանի որ այդ օրը բոլորը ցորեն կը տանէին աղալու:  
ԵՐԵՃԱԲԹԻՆ յիմար-իմաստունի վիճակը բաշելու օրն էր, եւ մարդիկ եկեղեցի կը փութային իրենց մէկ մտադրութիւնը գուշակելու: Տասը թուրքի կտորներէն հինգին վրայ կը գրուէր «իմաստուն», հինգին վրայ «յիմար» բառերը, եւ տասը երեխայ կը վերցնէ մէկական թուրք: Իրենց մտքին մէջ որեւէ փափաք ունեցող անձեր նախապէս կ'ընտրէին երեխաներէն մէկը: Անոր որ «իմաստուն» վիճակը իյնար, կը նշանակէր, որ փափաքը պիտի իրականանայ, «յիմար»ի պարագային՝ փափաքը պիտի չիրագործուի:

Ուրբաթ գիշեր հաւատացեալները եկեղեցոյ մէջ կ'անցնէին սուգի, տառապանքի, լացի ու վշտի ժամեր: Սակայն այդ ժամը ցաւով ու վիշտով լեցուն գիշերը վերջապէս կը դնէր կենցաղային ու հոգեկան ինքնազսպումին ու ժուժկալութեան իրական եւ ծիսական շղթային՝ մոր աշխատանքով եւ ուրախութեամբ լեցուն կեանքի հերթական սկիզբը ազդարարելով:

ՉՈՐԵՃԱԲԹԻՆ «չիք» կը կոչուէր: Այդ օրը կրակին վրայ անունակ ջուր կ'եռար անունները լուալու, լուացը ընելու, տունը մաքրելու եւ լոգնալու համար: Տղամարդիկ վը մաքրէին ձմրան-ընթացքին զոմին մէջ կուտակուած աղտը, որպէսզի չարը չըլի, վերանայ:

ԱԿԱԳ ՇԱԲԹՈՒՍ օր առաւօտեան աղջիկները ծոմ բերանով մօտակայ արտերէն մորածիլ բանջար կը հաւաքէին երեկոյեան իւղով եւ հաւկիթով տապակելու համար: Իսկ սամիրը կաթով եփած կորկոտաձաշը պարտադիր էր Խթումի օրը: Աւագ Շաբաթ օրը նաեւ Չատկուան նախապատրաստուելու օրն էր, կ'որոշուէր հագուստը, կը յարդարուէր տունը, արեւուն կը պարզուէր անկողինը, տան դռներուն շրջանակներուն կը փակուէր կարմիր հակիթի կեղեւներ, կը թխուէին խմորեղեններ:

Կարմոյ հայերը կէս գիշերին «ցալիս վերջ» անունը կու տային եւ մինչեւ միւս օրուան ժամերգութիւնը լուռ կը մնային այն համոզումով, որ չիք Չորեքշաբթին իրեն հետ ցաւերը կը տանի:

Յատուկ պատրաստութիւններ կը տեսնուին նշանուած տղոց եւ աղջիկներուն ընտանիքներուն մէջ, ուր ներկուող ու զարդարուող հակիթներուն թիւը քանի մը հարիւրի կը հասնէր, թխուող գաթաներուն եւ բաղարջներուն թիւը՝ տասնեակներու...

ԱԿԱԳ ԿԻՆԳՇԱԲԹԻ երեկոյեան մշեցիները հաց կը թխէին եւ երեսին կանեփ կը քսէին: Այս հացէն մեծաքանակ կը թխէին յետապակու սննդեցեալ ունեցողները:

Շաբաթ երեկոյեան, դեռ արեւը մայր չմտած, խթումի ընթրիքի սեղան կը պատրաստուէր. սովորութիւն էր սեղան բերել կարմիր հակիթ, ձուկ, հակիթով տապակուած շոմին կամ բանջար, թանձր եփած թանով ապուրը կամ կաթով եփած կորկոտաձաշը:

Լոռեցիները սեւ թելի վրայ թօքը հանգոյց կ'ընէին եւ կը դնէին եկեղեցիին պատին ձեղքին մէջ, որպէսզի «թռչունները հաւերուն ձագերը չթռցնէին»:  
Գիշերը, Ռուսուայի ծեսին եկեղեցիէն հաւատացեալները կտոր մը կարագ կը վերցնէին եւ կը քսէին մարմնին գանազան մասերուն՝ աչքերուն, ականջներուն, ձակարկին, ձեռքերուն եւ այլն...

ԿԻՐԱԿԻ ՉԱՏԻԿ է, Չատիկը թէ՛ երգերու, թէ՛ պարերու եւ թէ՛ խաղերուն ստեղծագործութեան հնարաւորութիւններ տուած է: Անպատրաստից, անպաճճձ երգերը, որոնցմով մայրերը կը շնորհաւորէին իրենց գաւակները, գաւակները՝ ծնողները, պարերգները, որ կը ծնէին տղաներու եւ աղջիկներու մրցակից պարող խումբերու միջեւ, մեր ժողովրդական բանահիւսութեան գեղեցիկ մտուցներն են:

Աւագ Կինգշաբթի օրը նաեւ Չատկուան հակիթները ներկելու օրն էր, խթումի ընթրիքին ուտելու համար: Չատկուան համար մեծաքանակ հակիթ կը ներկուէր Շաբաթ երեկոյեան. պայման էր, որ հակիթները կարմիր ներկուէին:

Ահա, օրինակ, թէ ի՞նչպէս մայրը կը շնորհաւորէ իր տղուն Չատիկը.

Ա տղայ, տղայ,  
Դու ալ կպաւոր,  
Դոմգի շալ կպաւոր,  
Դու իմ հայոց թագաւոր,  
Բոթլով գինի խտուրն,  
Ասամանի կպաւոր  
Քո Չատիկը շնորհաւոր:  
Այս երգն ալ դատեր ուղղուած է.

Ովսաննա ջան, Ովսաննա,  
Ուրախ Չատիկ Լուսաննա,  
Բարիդ գա Ընդստաննա,  
Բեռներ բերի բարաննա,  
Քաթան դոշագ տակիտ է,  
Չառ թակալն հագիտ է:

PHOTO NERSES

(Արագ սպասարկութիւն - որակաւոր լուսանկարներ)

ՀԻՄՆԱԳՐՄԱՆ

25 ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

36 photo ֆիլմի ցկարահանումը միայն 8,000 լ. ո.

(Kodak Royal քարտի վրայ տպուած էլ արդիական DIGITAL մեքենայի միջոցաւ) ... ԵՒ ՍՄԱՅԵԼ ՆԱԵՒ Լուսանկարի սոր ֆիլմ մը + ալպոմ մը + ցկարի INDEX մը

Կը ցկարենք փոքրերու լուսանկարներ ՉԱՏԿՈՒՄԱ յատուկ յարգարանքով

PHOTO NERSES: Պոլորձ Ըսմուտ, Զարգացած տարանի փողոց «Սանթրո ԱՐԻՆ»ի դիմաց: Ըն. 01 - 261858 եւ 01 - 255992

Ս. ՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ս. Փրկիչ Եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը, սիրով կը հրաւիրէ հաւատացեալ ժողովուրդը մասնակցելու

17 ԱՊՐԻԼ 2003ԻՆ ԱԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ Ժամը 16:00ին՝ - Ոսնյուլայի արարողութիւն - Համապատարագ հանդիսութեամբ՝ ԱՐԻՆ. Ս. ՅՈՎՅԱՆՆԵՍ ԵՊՍ. ԹԵՅՐՈՒԶԵԱՆԻ

Ժամը 20:00ին՝ - Խաւարման գիշեր եւ ընթերցում չարչարանքի Ս. Աւետարաններուն նախագահութեամբ՝ ԱՐԻՆ. Ս. ՅՈՎՅԱՆՆԵՍ ԵՊՍ. ԹԵՅՐՈՒԶԵԱՆԻ

18 ԱՊՐԻԼ 2003ԻՆ ԱԻԱԳ ՈՒՐԱԹ Ժամը 17:00ին՝ - Երեկոյեան ժամերգութիւն - Չարչարանաց քարոզ - Թափօր Թաղման Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի

Հանդիսապետութեամբ՝ ԱՍԵՆԱՊԱՏԻԻ ԵՒ ԳԵՐԵՐՉԱՆԻԿ Ս. Տ. ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍ ԺԹ. Պատրիարք Կաթողիկէ Հայոց

«ԱԶԳԱԿ»

ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ

«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հետաձայնել հետեւեալ թիւերուն.- 258526, 260115 եւ 241274:

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5418

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11
1
2
3
4
5
6
7
8
9
10
11
ՇՈՒՐՈՆԱԿԱՆ ՈՒՐԱՆԱՅԵԱՑ

- 1. Բուխերիկ - Ժամանակի միաւոր:
2. Հագորենի - Հասկ-ցիբ:
3. Խաղողի եփած քաղցու - Աքաղաղի կարթ - Ճերմակ շինանիւթ:
4. Տարի - Կոնակ - Իրերալընդ տառեր:
5. Լատին աւագերէց:
6. Խոհանոցի սպասնեւրէն - Կշիռ ունեցող:
7. Արաբական ոստան - Կրկնուած ձայնաւորներ:
8. Հայկական ամիսներու փ. օրը - Աճիւն:
9. Ջրային փոխադրամիջոց - Միջնադարու հայ քանդակագործ:
10. Անյայտ - ցուցական անական:
11. Արական անուն - Մրցումներու ասպարէզ:

ԹԻԻ 5417
1 2 3 4 5 6 7 8 9 10 11
1
2
3
4
5
6
7
8
9
10
11
ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ

ՈՏՆԼՈՒԵՅԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Ս. ԱՍՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՉ

Այսօր՝ Հինգշաբթի, 17 Ապրիլ 2003ին Ս. Ասրգիս Եկեղեցւոյ մէջ պիտի կատարուի Ոսնյուլայի արարողութիւնը, Երեկոյեան ժամը 4:00ին:

Արարողութիւնը պիտի կատարուի եւ յաւուր պատշաճի պիտի քարոզէ՝ ԳԵՐՉ. Տ. ՆԱՐԵԿ ԵՊՍ. ԱԼԻԵՄԵՉԵԱՆ

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը մերկայ գտնուելու եւ մասնակցի դառնալու Ոսնյուլայի արարողութեան:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ԱՍՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Պէրլուրի սակարահին մէջ օտար դրամահիշներու փակման սակագները, Սուրիական թղթակի, Իրաքեան տիւնար, Բուլղարեան տիւնար, Զորդանանեան տիւնար, Պահրէյնեան տիւնար, Ա. Մ. Էմիրութեան տիւնար, Քաթարեան ուիալ, Սէյուտական ուիալ, Օմանեան ուիալ, Եգիպտական կիւնէ, Անգլիական սքերլին, Չուիցերիական ֆրանք, Թրքական լիրա, Կիպրական փաուտ, Ճափոնական հապար եէն, Ափրիկեան հապար ֆրանք, Ամերիկեան տոլար, Քանադական տոլար, Աւստրալիական տոլար, Եւրօ

● ՈՍԿԻ Անգլիական մէկ ոսկի 127,000 - 132,000 լ. ո. Իրանեան մէկ ոսկի 113,000 - 118,000 լ. ո. Օսմանեան մէկ ոսկի 104,500 - 109,500 լ. ո. Մեքսիքական փէսոս 603,000 - 623,000 լ. ո. Մէկ քիլոկրամ ձոյլ ոսկի 15,680,000 - 15,880,000 լ. ո. Մէկ օնս ոսկի 325,50 - 326,00 \$ Մէկ օնս արծաթ 4,51 - 4,53 \$

● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը. Եւրօ 1.0790 - 1.0795 Քանադական տոլար 1.4522 - 1.4532 Զուիցերիական ֆրանք 1.3900 - 1.3910 Ճափոնական եէն 120.33 - 120.37 Մէկ սքերլին 1.5690 - 1.5700 Մէկ դոլար 563 դրամ

● ՍՈՒԽՏԵՐԻ ԲԱԺՆԵԾՈՒՂՈՒԹԻՒՆ Գիճի Ա. Ընդուն Գիճի Բ. Ընդուն

Ա. կարգ 4 3/8 4 3/8 Բ. կարգ 4 4/8 4 4/8

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱՆԵՐԱՆԵԱՆ ԸՆ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ ԽՈՅ (21 Մարտին 20 Ապրիլ) Պիտի ստանաք հաշուեցուցակ մը, որ շատ «աղի» պիտի թուի ձեզի: Ուրեմն ստուգեքք հաշիւը՝ վերանայելով ու բնեւորով: Ի պահանջել հարկին դիմացեք հաշուապահի մը:

☆ ՏՈՒԼ (21 Ապրիլին 21 Մայիս) Ձեր տարեդարձը կը մօտենայ, եւ կը կարծեք, որ ձեր կիներ կամ ամուսինը, ձեր ընկերը կամ ընկերուհին մոռցած են այդ թուականը: Ո՛չ, չեն մոռցած, այլ անոնք ձեզի համար կը պատրաստեն հանելի անակկալ մը: Օրը պիտի անցնի յաջող:

☆ ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս) Չանց կ'առնէք փոքր հիւանդութիւնը ձեր ընտանի անասունին: Կը սպասեք, որ հարցը մեծնայ ու բարդանայ: Այժմէն գայն տարեք անասնաբուծի մը:

☆ ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս) Եթէ մարզական փորձեր կը կատարէք, գորաւոր ու կարծր ձեռքերով մի՛ դիմէք, որպէսզի ձեր մարմինը չվնասուի: Ձեր տարիքին յարմար մարզածեք կատարեցէք:

☆ ԱՌԻԻԾ (24 Յունիսին 23 Օգոստոս) Անցեալը ձեզ հանգիստ չի ձգեր, անի թէ ինչո՞ւ կը տրտմիք երբեմն այդ պատճառով: Շատ մի՛ խորանաք նման հարցերու մէջ, ապրեցէք ձեր օրը գուարրութեամբ:

☆ ԿՈՅՍ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր) Այսօր յարաբերական ձեր կապերը քիչ մը դանդաղ պիտի ըլլան: Եթէ անհրաժեշտ հարցեր ունիք տեղ մը ներկայացնելու, սպասեցէք վաղուան, լաւ մտածելով՝ լուծեցէք հարցերը:

☆ ԿՇԻՈՒՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր) Կ'ուզեք գնել որակաւոր ինքնաշարժ մը կամ գործիք մը, բայց ձեր դրամը կը բաւէ: Միշտ կ'ուզեք լաւագոյնը ունենալ, այս պատճառով դրամատան մէջ ձեր խնայած գումարը կը պակսեցնէք:

☆ ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր) Ձեզի պիտի ուղղուի փաղաքշտկան խօսքեր ու գովեստներ, առանց գիտնալու, թէ ինչ կայ անոնց ետին: Դուք սիրով ընդունեցէք զանոնք, գուցէ անկեղծ են:

☆ ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր) Մի՛ ծուլանաք, հիւանդ չէք, բայց չէք ուզեր անկողինէն դուրս ելլել: Աշխատանքներ ունիք կատարելիք, գործի սկսեք, որպէսզի աշխուժանաք:

☆ ԱՅԾԵՂՋԻԻՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար) Բարեկամ մը պիտի քննադատէ ձեր մէկ վերաբերումը: Արդեօք անկեղծ է ան, թէ նախանձի դրդումով այդպէս կը խօսի: Պիտի նախընտրէիք վերջին միտքը:

☆ ԾՈՎԱՆՈՅՇ (21 Յունուարին 19 Փետրուար) Չանձրացած էք ձեր գործէն, բայց չէք համարձակիր հրաժարիլ անկէ: Մի՛ մտածեք, թէ ձեզ գործէ կ'արձակեն. գրոյց մը ունեցէք այդ մասին ձեր հարազատներուն հետ ու եղբայր խոհեմ:

☆ ՉՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ) Ձիդերու վրայ կեցած էք, կը սպասէք սիրելի անձի մը գալուստը արտասահմանէն, բայց ան կ'ուշանայ: Պէտք է համբերէք: Վաղը կրնաք լաւ լուրեր ստանալ:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒԱՏՕՆ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԹԱՏՐՈՆ

«ԿՈՏՈ»Ն՝ ՊԵՔԵԹԻ ՆՇԱՆԱՒՈՐ ԳՈՐԾԻՆ ՄԻՍ ԵՐԵՍԸ




«Կոտո»ի ներկայացումը տեսարան մը

Պէրլուրի Ամերիկեան համալսարանի ուսանողական թատերախումբը, արդէն իսկ շաբաթէ մը փեր կը ներկայացնէ «Կոտո» թատերախումբը, որ գրուած է համալսարանի թատերական ակումբի անդամներուն կողմէ: Համալսարանին մեծածախս նորոգութիւններու ենթարկած «Ուէսթ Հոյ» թատերասրահին մէջ տեղի ունեցող «Կոտո»ն կը ներկայացնէ անհեթեթի հերոսները զինք կը սպասէին: Այս կացութիւնը կեանքի կը կոչեն Կոտոն մարմնաւորելով իրեն անհոգ, անտարբեր ու ծանծաղամիտ աստուած մը: Թատերական ակումբի անդամներուն կողմէ գրուած «Կոտո»ն կը յաջողի

պահել անհեթեթի թատրոն մը յատկանշող մընոլորտը եւ հարցականներ յանաջացնել կեանքի իմաստին շուրջ:

«Կոտո»ի այս տարբերակը 2001ին անգամ մը եւս ցուցադրուած էր թատերական ակումբին անդամներուն կողմէ: Սակայն այս տարուան տարբերակը հանդիսատեսներուն կը ներկայայնայ որոշ բարեփոխումներ կրած բնագիրով, ինչպէս նաեւ՝ շատ աւելի շքեղ բեմադրարարութիւնով: Նշենք, որ «Կոտո»ի վերջին ներկայացումը տեղի կ'ունայ այսօր, երեկոյեան ժամը 7:00ին:

ՕՂԵՐԵՒՈՅ



ՀԻՆԳՇԱԲԹԻ, 17 ԱՊՐԻԼ 2003

ՊԵՅՐՈՒԹ ՄԱՍԱՄ ԱՄՊՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ԾԵՐԵԿ՝ 22°C

ԳԻՇԵՐ՝ 15°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 73%

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 17 Ապրիլ 1953

ԽՐԱԳՐԱԿԱՆ ՏԱՆՔ ԼԵՑՈՒՆ ԱՓՈՎ

Լիբանանի հայերը, մեծ, շատ մեծ պարտականութիւն մը ունին կատարելիք այս Կիրակի:

Օրը, Թեմի Ռուսմեակեան Խորհուրդի շատ բարեղէպ մէկ կարգադրութեամբ, հոչակուած է ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ՕՐ: Ու կը կազմակերպուի այս տարի առաջին անգամ ըլլալով:

Այդ օրը մեր մտածումի առարկան պիտի դարձնենք ՀԱՅ ԴՊՐՈՅՇ: Հոն հասակ նետող եւ դաստիարակուող մանուկները: Եւ անոնց կրթութեան, անոնց հայկական դիմագծի կերտման պատասխանատու հայ ուսուցիչը:

Մտածումի առարկան, սակայն, ո՛չ միայն համակրական տրամադրութեամբ, ձեռնարկի նշանակութիւնը ըմբռնողի պայծառամտութեամբ, այլեւ գործնական արդիւնքի հասնելու բծախնդրութեամբ եւ ձեռնարկը ի գին ամէն բանի յաջողցնելու վճռակամութեամբ:

Իսկ այս վերաբերումը ցոյց պիտի տան բոլոր հայերը, մեր մշակութային կամ բարեսիրական բոլոր կազմակերպութիւնները: Ո՛չ միայն ծնողները, այլեւ վարժարաններու մէջ գաւակ չունեցող ընտանիքները: Ամուրիները: Այրն ու կինը հաւասարապէս: Ունեւորը՝ իր յաւելուելու բաժին հանելիք առատածուրստութեամբ: Չունեւորը՝ իր օրուան վատակէն, սեւ օրուան համար մէկ կողմ դրած փոքր խնայողութեան:

Սրտերը պիտի բացուին դրամապակցութեան առաջ: Եւ ձեռքերը պիտի շարժին՝ կամքը խղի ձայնի հպատակեցնելու: Ինչ որ պիտի տրուի, պիտի տրուի գիտակցութեան, հանդիման, մէկ դիմումի վրայ: Նոյն-

Գիտակցութեամբ: Պիտի տրուի ու խտաւորի հաւատքով ու երկիրաճութեամբ: Նիւթական կարողութեան մաս մը, ու խտի մը իրագործման ի խնդիր մատաղ բերդի ինքնագուր պատրաստակամութեամբ: Վանգի հայ մարդուն մեծագոյն ու խտերէն մեկն է նաեւ հայ մեծցնել հայ մանուկը, լիառատ գոհացնել գայն հայկական սնունդով, գուրգուրալ անոր սպազային վրայ եւ ըստ այնմ նպատակ մեր պատուական ցեղի յաւերժացման:

Դժուար է երեւակայել հայ մարդուն սրտին խօսող աւելի շինարար առաջդիմութիւն:



Մեր ազգային բոլոր հիմնարկութիւններն ու մեր մշակութային բոլոր արժեքները ունին իրենց տեղն ու դերը մեր ամբողջական գոյութեան պահպանման մէջ: Դպրոցը, սակայն, անոնց հիմնաքարն է: Եթէ հայը իր լեզուով կարգալ չգիտնայ, եթէ չունենայ իր ազգային գիտակցութիւնն ու ցեղային հպարտութիւնը, եթէ չունենայ չլրաց իր անցեալը, եթէ չունենայ իր ազգային չգիտնելու պատճառով կարգալ չգիտնայ, եթէ չունենայ իր ազգային չգիտնելու պատճառով կարգալ չգիտնայ, եթէ չունենայ իր ազգային չգիտնելու պատճառով կարգալ չգիտնայ:

ԱՅՍՕՐ 17 ԱՊՐԻԼ 2003

■ 1922- Ճեմալ Ազմի եւ Պեխաւտին Շաքիր Պերլուրի մէջ կ'ախարհակցուի Արամ Երկանեանի եւ Արշալիր Շիրակեանի կողմէ:
■ 1980- Դ. Յ. Ա. Մարտիկներ մահափորձի կ'ենթարկեն Վատիկանի թուրք դեսպան Վեհապի Թիւրքը եւ անոր ինքնաշարժի վարորդը:
■ 1984- Ժողովուրդներու Մնայուն Ատեանը կը ձանձնայ Հայկական Յեղասպանութիւնը:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն

## ԱՇԽԱՐՀ



### ԳԵՈՐԳ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՊԻՏԻ ՂԵԿԱՎԱՐԷ ԼՈՒՔՍԱՄՊՈՒՐԿ - ԴԱՆԻԱ ՃԱԿԱՏՈՒՄԸ

Միջազգային իրաւարար Գեորգ Յովհաննիսեան երէկ Եւրոպայի Կոնգրէսի նշանակուեցաւ յառաջիկայ Յունիս 10ին Լուքսամպուրգի մէջ տեղի ունենալիք Լուքսամպուրգ - Դանիա մրցումին (Եւրո - 2004ի գտում) կերպարան իրաւարար:

Բ. խմբակին երկրորդ դիրքը գրաւող Դանիա երեք կէտով ետ կը մնայ պարագլուխի դիրքը գրաւող Նորվեգիային (որ ունի տարւոյ կէտ), մինչ Լուքսամպուրգ կը գրաւէ 5րդ եւ վերջին դիրքը՝ առանց որեւէ կէտի: ԱԶՐՊԵՅԾԱՆԻ կախակայումը՝ ՖիՖԱին կողմէ, երէկ դժգոհ ձգեց Կալէսի ֆուտբոլի ֆետերասիոնը, նկատի ունենալով, որ անիկա իր կատարած երկու մրցումներէն յաջողած էր երկու յաղթանակ խլել ազգերէն:

Յորդ իր կատարած չորս մրցումներէն չորս յաղթանակ արձանագրած Կալէս, որ մաս կը կազմէ Թ. խմբակին, մտահոգ է, որ Ազրպէյճանի դէմ պատիժները շարունակուելով, Եւրո. Կ. Կ. Ա. անոր կատարած մրցումներուն արդիւնքները կրնայ չեղեալ համարել:

### ՓԻՆԿ ՓՈՒԿ

### Հ. Մ. Լ. Մ. ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԻՐ ՅԱՂԹԱԿԱՆ ԵՐԹԸ

Մոն Լա Սալի մէջ տեղի ունեցող Լիբանանի փինկ փոնկի տղոց խմբային ախոյեանութեան մրցաշարքին, Հ. Մ. Լ. Մ. Պէյրուսի շարունակեց իր յաղթական երթը եւ անցեալ Շաբաթ օրուան նման արձանագրեց երկու յաղթանակ եւս:

Իր կատարած առաջին մրցումին, Հ. Մ. Լ. Մ. Պէյրուսի պարտութեան մատնեց Մար Եուսէֆը, իսկ երկրորդին՝ Պլու Սթարզը, երկուքն ալ 3-0 արդիւնքով:

Անցեալ Շաբաթ օր, Հ. Մ. Լ. Մ. Պէյրուսի յաջորդաբար պարտութեան մատնած էր Ահլի Սալտան (3-0) եւ Լիբանանի Բանակի հաւաքակաճը (3-2):

Հ. Մ. Լ. Մ. Պէյրուսի յաջորդ մրցակիցները պիտի ըլլան Անդրանիկ Պէյրուսի եւ Քիթարմանը: Այդ մրցումները տեղի պիտի ունենան յառաջիկայ Զորք շաբաթի, 23 Ապրիլին, դարձեալ Մոն Լա Սալի մէջ: Առաջին մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 5:30ին, իսկ երկրորդը՝ ժամը 7:00ին:

Նշենք, թէ իր արձանագրած այդ չորս յաղթանակներուն շնորհիւ այժմ Հ. Մ. Լ. Մ. Պէյրուսի կը գրաւէ դասակարման պարագլուխի դիրքը:

### ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ Բ. ՂԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅԱՆՈՒԹԻՒՆ


### ԱՅՍՕՐ՝ ՎԵՐՁԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻ ԲԱՅՄԱՆ ՄՐՅՈՒՄԸ

Լիբանանի ֆուտբոլի Բ. դասակարգի ախոյեանութեան 24րդ եւ վերջին հանգրուանի բացման մրցումին, այսօր՝ Հինգշաբթի տեղի կ'ունենայ Ծապաթ Թրիփոլի - Ռասիկ մրցումը, Թրիփոլիի Քապապետարանի դաշտին վրայ, ժամը 4:00ին: Անոնք երկուքն ալ 2002-2003 եղանակին գծով կը կատարեն ախոյեանութեան իրենց վերջին մրցումը:

Նշենք, թէ կիրակի, 20 Ապրիլին, Պէյրուսի Քապապետարանի դաշտին վրայ, ժամը 4:00ին, տեղի կ'ունենայ Հ. Մ. Մ. - Հ. Մ. Լ. Մ. մրցումը:

### ՊԱՉԼԸՐ ԴԷՊԻ ԲԱԹԱՕՐ

Քայլերուսուով թրքի պատասխանատուները երէկ յայտնեցին, թէ որոշած են իրենց ակումբին մաս կազմող երեք մարզիկներուն՝ Մարիո Պալուրի, Հէրի Քոչի եւ Բերդապահ ձեռքի Քոչի պայմանագրութիւնները այս եղանակի աւարտին չնորոգել:



Մարիո Պալուր

30 անգամ Գերմանիոյ ֆուտբոլի ազգային խումբին շապիկը կրած Պալուր (34 տարեկան), որ 1999ին Պայէրն Միւնխիսէն միացաւ Քայլերուսուով թրքի յայտնապէս այդքան ալ դժգոհ չեղաւ, այս որոշումին ի տես, որովհետեւ առանց ժամանակ կորսնցնելու մեկնեցաւ Տոհա (Քաթար), հոն տեղւոյն ակումբներէն մէկու մը հետ պայմանագրութիւն մը կնքելու համար:

Ըստ շրջան ընդ տեղեկութիւններուն, քաթարեան ակումբ մը, որուն անունը ցարդ կը մնայ անորոշ, տարեկան 2 միլիոն եւրո պատրաստ է կճարելու Պալուրի համար, սակայն այս ուղղութեամբ ցարդ պաշտօնապէս ոչինչ կը յայտարարուի:


Նշենք, թէ ներկայիս Քաթարի ֆուտբոլի ախոյեանութեան մրցումներուն իր մասնակցութիւնը կը բերէ Պայէրն Միւնխիսի անոր նախկին խմբակից Շեֆֆան Էֆենպէլը, որ նոյնպէս 34 տարեկան է:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

### ԱՅՍՕՐ ՎԵՐՁԻՆ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ, ՆԱԽՔԱՆ ՓԼԵՅՕՖԻ ԸԱՆԳՐՈՒԱՆԸ

ԷՆ. ՊԻ. ԷՅ. ի այսօրուան մրցումներուն, յայտարարին վրայ են 13 ճակատումներ, որոնցմով կ'աւարտի 2002-2003 եղանակը, նախքան փլէյ-օֆի մրցումները սկսիլը:

15 տարի պատմութիւն աշխարհին մէջ միշտ ալ ներկայ եղած եւ էՆ. ՊԻ. ԷՅ. ի պատմութեան մէջ իր անունը արձանագրած Մայքըլ Ճորտընի համար այսօր այդ ասպարէզը վերջ կը գտնէ երբ ան իր կազմին՝ Ուաշինկթըն Ուիզարտի հետ կը կատարէ իր վերջին մրցումը՝ Ֆիլատեֆիայի մէջ, դաշտին տէրերուն՝ Սիւսթըրզի դէմ:



Մայքըլ Ճորտըն

Ստորեւ՝ վերջին օրուան մրցումներուն յայտագիրը:

Տիբրոյիք Փիսթընգ - Պոսթըն Սեյթիքս  
Ուաշինկթըն Ուիզարտ - Ֆիլատեֆիա Սիսթըրզ  
Ռոքեթս Ռեփրայ - Քլիվլենտ Քաւալիք  
Նիւ ձըրքի Նէքց - Ինտիանա Փէյսըրզ  
Օրլանտո Մէյթր - Միլուոքի Պաքս  
Միչիգան Վուլվզ - Մեմֆիս Կրիկիթ  
Արլանքա Հոքս - Նիւ Օրլինզ  
Տալաս Մալթրիքս - Սան Անթոնիո Սփըրզ  
Հիուսթըն Ռոքեթց - Տեքսաս Նալէքց  
Եուրա Ճէգ - Սաքրամենթո Քիմկ  
Ֆեօնիքս Սանզ - Սիէրըյ Սուփըրսոնիքս  
Փորթլենտ Թրէյլ Պլէյթըրզ - Լոս Անջելես Քլիփթըրզ  
Լոս Անջելես Լէյքըրզ - Կոլորադո Սթըյթ Ուոթըրզ

### ԹՐԻՍԹԱՆ ՄԷԿ ԱՄԻՍ ՊԻՏԻ ԲԱՅԱԿԱՅԻ ԴԱՇՏԵՐԷՆ

Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան ընդհանուր դասաւորման 2րդ դիրքը գրաւող Տեփոթիօ Քորուսա երէկ մեծ հարուած մը ստացաւ, երբ իտալիական թիւղը յայտնեց, որ յառաջապահ Տիեկո Թրիսթան, որ օր մը առաջ ֆուտբոլի բարեկամական մրցումի մը ընթացքին վիրաւորուեցաւ, շուրջ մէկ ամիս պիտի բացակայի դաշտերէն:



Թրիսթան

27 տարեկան Թրիսթան, այսպիսով իր կազմին կատարելիք ախոյեանութեան չորս մրցումներուն դաշտ պիտի չներկայանայ, ինչպէս նաեւ յառաջիկայ Ապրիլ 30ին Էքսուատոր - Սպանիա ֆուտբոլի միջազգային բարեկամական մրցումին:

Պարագուայի դիրքը գրաւող Ռէյալ Մատրիտէն երեք կէտով ետ մնացող Տեփոթիօ Քորուսա, այժմ իր ունեցած կողմը շնորհիւ է, որ կը գերազանցէ 3րդ դիրքը գրաւող Ռէյալ Սոսիէտալը:

Փիրլօ, որ անցեալ շաբաթավերջին Միլանօ քաղաքի տեր-պիլին ալ բացակայած էր, շատ հաւանաբար Քալչիոյի վերջին մրցումին՝ Փիաչենցա-Միլան (25ին) կարենայ դաշտ ներկայանալ:

● ԹՐԻՍԹԱՆԻ ճատագիրին ենթարկուեցաւ նաեւ Ա. Սէ. Միլանի միջնապահ Մատրիտէ, որ ուր օր առաջ Ամսթերտամի

Մատրիտէ, որ անցեալ շաբաթավերջին Միլանօ քաղաքի տեր-պիլին ալ բացակայած էր, շատ հաւանաբար Քալչիոյի վերջին մրցումին՝ Փիաչենցա-Միլան (25ին) կարենայ դաշտ ներկայանալ:

Սախապէս Փարմա մաս կազմող Քալչիոյ պիտի բացակայի նաեւ յառաջիկայ շաբաթ տեղի ունենալիք Վալենսիա - Ինթեր Միլան «Չէմփիընզ Լիկ»ի ֆուտբոլի մրցաշարքին քառորդ աւարտականի դարձի մրցումին:

● ԹՐԻՍԹԱՆԻ ճատագիրին ենթարկուեցաւ նաեւ Ա. Սէ. Միլանի միջնապահ Մատրիտէ, որ ուր օր առաջ Ամսթերտամի

Մատրիտէ, որ անցեալ շաբաթավերջին Միլանօ քաղաքի տեր-պիլին ալ բացակայած էր, շատ հաւանաբար Քալչիոյի վերջին մրցումին՝ Փիաչենցա-Միլան (25ին) կարենայ դաշտ ներկայանալ:

Քալչիոյի աւարտին մնացած վեց հանգրուան միայն եւ Միլանօ քաղաքի երկու կազմերը այժմ վեցական կէտով ետ կը մնան պարագլուխի դիրքը գրաւող Եուրոպէանիսէն, որ ունի 61 կէտ:

**ԳՐԱԴՈՒՄՈՐ**

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «Բ. ԿԱՆԱՉԵԱՆ» ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈՒԼԷՃԻ ՎԱՐՉ ՄԱՐՄԻՆ ԵՒ ԾՆՈՂԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲ «ԸՆԹՈՒԻԸ»

7 ՅՈՒՆԻՍ 2003

**ՆՈՐԱՆՈՒՆԴԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԻՈՒԹԻՒՆ**

**ՅԵՏԱԶԳՈՒՄ**

Նոր Անթոնի Մշակութային Միութեան կազմակերպած դասախօսութիւնը «Շայտախօսի ժամանակակից պատմագրութիւնը» (դասախօս՝ ԴՈԿՏ. ՓՐՈՖ. ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ), որ տեղի պիտի ունենայ Երեքշաբթի, 22 Ապրիլ 2003, երեկոյեան ժամը 8:00ին, Ե. Կ. Բ. Մ. Սահակեան - Լ. Սկրտիչեան ընդէն մէջ, յետաձգուած է:

### ԹԵՆԻՍ. ՄՈՆԹԷ ԲԱՐՈՅԻ ՄՐՅԱՇԱՐՔ

### ՆԱԼ ՊԱՆՏԵԱՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ

Մոնաքոյի մէջ (Ֆրանսա) տեղի ունեցող Մոնթէ Քարլոյի Մասթըրզի թենիսի միջազգային Բ. հանգրուանին իր կատարած մրցումին, արժանթիւնաւայ Դաւիթ Նալպանտեան (դասոճած՝ 6րդ) 6-2 եւ 7-6 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք իտալացի Ֆիլիփօ Վոլանտրիէն դուրս մնաց մրցաշարքէն:

Բ. հանգրուանին պարտութիւններ կրելով, մրցաշարքէն դուրս մնացին նաեւ չեխ Երիկ Նովաք (դասած՝ 5րդ), Թայլէնտցի Փարատորն Սրիչափան (7րդ), գերմանացի Ռայնըր Շուլցը (8րդ), պրագիցի Կուլթալօ Բուլեթիէն (10րդ), ամերիկացի ձեյմա Պլէյթ (15րդ), ուսու Եւզենի Քաթիլիքով եւ ուրիշներ:

Իսկ աղջկանց մրցաշարքին զուգրեթէ Մարի-Գայիանէ Միքայէլեան 6-4 եւ 7-6 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք 3րդ դասուած ամերիկացի ձեյմա Քաթիլիքով, իր կարգին դուրս մնաց մրցաշարքէն: Բ. հանգրուանին պարտութիւն կրեց նաեւ ուսու Թաթիանա Փանովա:

### ՓՈՐԹՅՄՈՒԹ ԲԱՐՉՐԱՅԱԻ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ԴԱՍԱԿԱՐԳ

15 տարուան բացակայութենէ ետք, երէկ Փորթմոնթ 1-0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Պրոնլին (16րդ), յաջողեցաւ ապահովել բարձրագոյն դասակարգին իր տոմսը: Իր արձանագրած այս յաղթանակէն ետք անիկա երկու կէտի առաւելութիւն ունեցաւ 2րդ դիրքը գրաւող Լայթթը Միթիի վրայ, որ իր տոմսը ապահովելու համար տակաւին յաղթանակի մը պէտք ունի, թէեւ անիկա այժմ 14 կէտի առաւելութիւն ունի 3րդ դիրքը գրաւող Շեֆիլտ Եուրոպէանի վրայ, որ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Նոթիքիսթ Զորէսթը (5րդ):

Նշենք, թէ ցարդ Մանչեսթըրի ախոյեանութեան է Ա. դասակարգ, սակայն նախաձեռնի դիրքը գրաւող Ուէսթ Պրոմոուի Ա. դասակարգ փոխադրուելու տակաւին յստակացած չէ:

Ստորեւ՝ Ա. դասակարգի ախոյեանութեան դասաւորումը:

1.- Փորթմոնթ	45
2.- Լայթթը Միթի	89
3.- Շեֆիլտ Եուրոպէան	87
4.- Ռիտիմի	73
5.- Նոթիքիսթ Զորէսթ	70
6.- Վուլվզ	69
7.- Իսլուիլ	68
	64

### ՊՈՍԹԸՆԻ ՄԱՐԱԹՈՆԸ՝ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Երկուշաբթի, 21 Ապրիլին տեղի պիտի ունենայ Պոսթընի մարաթոնը, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն բազմաթիւ անվէթներ:

Անոնց կարգին պիտի ըլլայ նաեւ կոյր անվէթ մամբրիկացի Մարլա Ռուսիլը, որ պիտի մասնակցի աղջկանց մարաթոնին:

Ան անցեալ Նոյեմբերին իր մասնակցութիւնը բերաւ Նիւ Եորքի մարաթոնին եւ հանդիսացաւ հինգերորդ:

Ան յաջողած է չահլի վեց Փարալիմպիքի մետալներ, որոնց չորսը՝ Պարալիմպիկ խաղերուն ընթացքին, իսկ երկուքը՝ Աթլանթայի Ողիմպիականին:

Այսպիսով, ան հանդիսացաւ առաջին անվէթը, որ Ողիմպիականի մրցումներուն մասնակցելով 1500 մեթր վազելին մէջ հանդիսացաւ ութերորդ:

Վատահաբար, շատեր հարց կու տան, թէ ինչպէս կոյր անվէթ մը կը մասնակցի մարաթոնի կամ վազելի մրցումներուն: Հեծանիւով անոր առջեւ պիտի գտնուի պատասխանատու մը, որ հարկ եղած ցուցմունքները կատարելով անոր, հարկ եղած պարագային ալ Ռուսիլը պիտի գգուցանէ, եթէ անոր դիմաց որեւէ արգելք մը չհանդիսանայ:

### ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇՈՒՄՈՒՆ ԶԱՐԴԱՅՈՒՄԸ ՍՐԵՈՅՎԱՐԳԱՆՆՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՉ

Տեառն մերոյ Յիսուսի Բրիտանիա հրաշափառ Յարութեան տօնին ուրիշ առիթով, 4 Կիրակի, 20 Ապրիլ 2003ին, Սրբոց Վարդանանց Եկեղեցոյ մէջ պիտի մատուցուի համոզիւտոր Ս. Պատարագ:

Պիտի պատարագ եւ քարոզ՝ **ԸՈԳԶ. Տ. ՎԱՐԱԳ ՎՐԴ. ԹՕՓԱԼԵԱՆ**

Սկիզբ ժամերգութեան	7:30
Ս. Պատարագ	9:30
Քարոզ	10:30

Երգեցողութիւնը պիտի կատարէ եկեղեցոյս դպրագ Գոշիկեանը, ղեկավարութեամբ՝ դպրապետ պրն. Սարգիս Գոշիկեանը:

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ մեր ժողովուրդը մերկայ գտնուելու Ս. Պատարագի եւ հաղորդութեան օրուան ցնձաթ խորհուրդով ու պատգամով:

Պատարագ եւ քարոզ՝ **ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՎԱՐԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

### ՊՈՒՇ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ ՁՆՁԵԼ ԻՐԱՔԻ ԴԵՄ ՄԱԿԻ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ



Միացեալ Նահանգներու նախագահ ճորճ Պուշ երկ ԵՄ Լուիսի (Միգուրի) մէջ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին ի շարք ալ յոյս ուղղեց ջնջել Իրաքի դէմ հաստատուած ՄԱԿի պատժամիջոցները, «որովհետեւ այլեւս Սատտամ Հիւսէյնի վարչակարգը պատմութեան անցած է»:

### ՏԵՆՔՔՈՇ ՊԱՏՐԱՍՏ Է ԲԱՆԱԿՑԵԼՈՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԵՏ...



Տենքքաշ

ԱՆԳԱՐԱ, 16 (ԱՅՓ).- Թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքքաշ Չորեքշաբթի օր յայտնեց, որ պատրաստ է բանակցելու Եւրոպական Միութեան հետ, եթէ այս վերջինս հաւասարաշքով դիտել իր անջատումը պետութիւնն ու յունական Կիպրոսը: Թրքական Կիպրոսը կը վայելէ միայն Թուրքիոյ պարտաւորութիւնն ու ճանաչումը, մինչ ամբողջ աշխարհը կը ճանչնայ յունական Կիպրոսը, որ ստորագրեց Ե. Միութեան անդամակցելու համաձայնագիրը:

Տենքքաշ ըսաւ, որ իր պարտականութիւնն է պաշտպանել իր պետութիւնն ու անոր գերիշխանութիւնը՝ բաց պահելով բանակցութեանց դուռը Ե. Միութեան հետ: Ան ըսաւ նաեւ, որ պատրաստ է նոր գործակցութեան մը ձեռնարկելու յոյն-կիպրացիներուն հետ, պայմանաւ որ այդ գործակցութիւնը հաստատուի հաւասարութեան վրայ:

Միւս կողմէ, Կիպրոսի նախագահ Թասուս Փափաքուրտու ըսաւ, որ կողմնակից է Տենքքաշի մտքով ձեռնարկուող, որ կողմնակից է Եւրոպական Միութեան: Փափաքուրտու շեշտեց, որ կիպրական հարցը դժուարութիւններ պիտի չստեղծէ Ե. Միութեան մէջ Կիպրոսի ներկայութեան դիմաց:

### ՍԱՐՍԸ ՊԱՏՃԱՌՂ ԺԱՀՐԸ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ Է

Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը՝ ՀՈՒ ԵՐԵԿ հաստատեց, որ մահացու թրքաբուսը՝ ՍԱՐՍը պատճառող մահիւր թորոնավիրուսն է, որ կը պատճառէ նաեւ սովորական հարբուիւր: Այս հաստատումը կատարուեցաւ 13 գիտաշխատանոցներու մեծագոյն մասնագէտներուն կողմէ, որոնք հանդիպում մը ունեցան Երեկ, Ժնևի մէջ: Ըստ մասնագէտներուն՝ հաստատելէ ետք, թէ համաճարակին պատճառը Քորոնա մահիւրն է, աւելի արագ կրնայ ընթանալ անոր դէմ պայքարելու գործընթացը:

Մինչ այդ, Չինաստանի եւ Հոնկ Բոնկի մէջ կը շարունակէ բարձրանալ ՍԱՐՍէն վարակուողներու թիւը: Հոնկ Բոնկի մէջ երեկ յայտարարուեցաւ մահը հինգ անձերու: Անցնող հինգ օրերուն 29 նոր կոհեր ինկած են Հոնկ Բոնկի մէջ: Սինկափուրի մէջ երեկ երկու հոգի մահացած է, իսկ Չինաստանի մէջ, ուր որոշ գաղտնապահութիւն մը կը տիրէ հիւանդութեան հանդէպ, նոր պարագաներ արձանագրուած են եւ որոնցմէ մէկը մահացած է:

(ԱՅՓ)

### ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԿՐ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԱՊՈՒ ԱՊՊԱՍԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ



Ապու Ապպաս

Պաղեստինեան իշխանութիւնը երեկ «ապօրինի» նկատեց եւ դատապարտեց պաղեստինցի արմատական ղեկավար Ապու Ապպասի ձերբակալութիւնը ամերիկեան ուժերուն կողմէ, Պաղեստինի մէջ: Ապու Ապպաս կը նկատուի «ծրագրող ուղեղը» «Աքիլէ Լաուրո» նաւուն առեւանգումին, որ տեղի ունեցած էր 1985ին: Պաղեստինեան իշխանութիւնը պահանջեց ազատ արձակուիլ Ապու Ապպասի:

Պաղեստինցի պաշտօնատարներ ըսին, որ Ապու Ապպասի ձերբակալութիւնը ուղղակի յարձակում մըն է պաղեստինցի ժողովուրդին եւ ՊԱԿի դէմ, զոր կը ղեկավարէ Եսաէր Արաֆատ եւ որուն շարժումներէն մէկն է Ապու Ապպասի Պաղեստինի Ապտազրութեան ձակաւորը: Պաղեստինցի գլխաւոր բանագնաց Սաէպ Ուրալաթ կոչ ուղղեց ամերիկեան կառավարութեան անմիջապէս ազատ արձակելու Ապու Ապպասը եւ յարգելու ՊԱԿի եւ Իսրայէլի միջեւ 1995ին ստորագրուած համաձայնագիրը, որուն մէկ պայմանը կը նշէ, թէ ՊԱԿի անկախութիւնը չեն կրնար ձեռք բերել իր արարքներու համար, զորս գործած են Սեպտեմբեր 1993էն առաջ: Փոխանցման հանգրուանի համաձայնագիրը կը կրէ նաեւ ստորագրութիւնը Միացեալ Նահանգներու նախկին նախագահ

Պիլ Բլինթընի: Իբրեւ վկաներ ստորագրած էին նաեւ Ռուսիա, Եգիպտոս, Եւրոպական Միութիւն եւ Նորվեգիա:

Ուրալաթ ըսաւ նաեւ, որ կեանքին մեծ մասը արտօրի մէջ անցուցած Ապու Ապպաս քանի մը անգամ կապ է Այսրոյորդանի արքային համակարգումով եւ հաւանութեամբ: Այս պատճառով ալ Ուաշինգթոնը պէտք է յարգէ համաձայնագիրը եւ ազատ արձակէ Ապու Ապպասը:

«Աքիլէ Լաուրո» նաւը առեւանգուած էր Միջերկրականի մէջ: Անոր ձամբորդներէն անդամայնոյժ ամերիկացի պրօսաշրջիկ մը սպաննուած ու ծովը նետուած էր: Նաւը իտալական ըլլալով՝ իտալական ատեան մը օրին ի բացակայութեան ցկեանս բանտարկուած էր նաեւ իր կապերը չէ իւր անհաւանութեան հետ ու վայն չէ դատապարտած: Պաշտօնատար մը ըսաւ, որ յիշեալ համաձայնագիրը, որեւէ ձեռք մը չէ կրնար ձեռք բերել իր անհաւանութեան արմատականները:

Իտալիոյ արդարութեան նախարար Ռոպերթո Քարթելլի յայտարարեց, որ Հոնկ պիտի պահանջէ ու հետապնդէ Ապու Ապպասի արտայանձնումը:

Իրաքի դէմ պատերազմող ամերիկեան ուժերուն բանբերը՝ Վորտընը Պրոքսըրը, որ Ապու Ապպասի ներկայութիւնը Պաղեստինի մէջ կը փաստէ, թէ Իրաքի իշխանութիւններն ու վարչակարգը զօրավիճակ կը կանգնէին ահաբեկչութեան: Պրոքսըրը շեշտեց, որ Ապու Ապպաս ահաբեկչի էր ու ահաբեկիչ ալ կը մնայ:

Իսրայէլի կարգին յայտարարեց, որ Ապու Ապպաս ահաբեկիչ մըն է, որ կորսնցուցած է ներում շնորհող առիթը (1995ի համաձայնագիրը), որովհետեւ իր կապերը չէ իւր անհաւանութեան հետ ու վայն չէ դատապարտած: Պաշտօնատար մը ըսաւ, որ յիշեալ համաձայնագիրը, որեւէ ձեռք մը չէ կրնար ձեռք բերել իր անհաւանութեան արմատականները:

### ԻՍՐԱՅԷԼ ԿՐ ՓՈՐՁԷ ԿԱՆԽԱՐԳԻԼ ԵԼ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՈՐԵԻԷ ԶԱՐԶԱԿՈՒՄ՝ ԶԱՏԿՈՒԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ...

Իսրայէլի շրջափակեց պաղեստինեան շրջանները՝ կանխարգիլելու համար որեւէ յարձակում, որ կրնայ գործուիլ իր կանայ մեծագոյն տօնախմբութիւններէն մէկուն ընթացքին, որ կը վտանգադիպի նաեւ քրիստոնէական շատիկին: Անցեալ տարի անձնասպանական մեծ գործողութիւն մը կատարուած էր այս օրերուն:

Պաղեստինեան շրջաններու փակման վտանգէն՝ իսրայէլեան ուժեր թուրքարմի մէջ ձերբակալեցին երկու պաղեստինցիներ, որոնք ենթադրաբար կը պատրաստուէին անձնասպանական գործողութիւններու: Իսկ Հեպրոնի մօտ, իսրայէլացի զինուորներ սպաննեցին իսրայական մը, որ Համասի անդամ է: Ակնատեսներ յայտնեցին, որ իսրայէլացի զինուորներ յաջողած էին գտնել Համասի Միւլեյման Մասսարայի թաքստոցը, որ սպաննեցին զինքը: Իսրայէլացի բանբեր մը ըսաւ, որ Մասսար

աւ մերժած է անձնատուր ըլլալ եւ թէ ան կրակ բացած է զինուորներուն վրայ, որոնք հակադարձելով զայն սպաննած են:

Իսրայէլեան բանակին մէկ բանբերը յայտնեց, որ յառաջիկայ քանի մը օրերուն կապալի եւ Այսրոյորդանի բնակիչներուն արգիլուած պիտի ըլլայ Իսրայէլ մտնել: Մինչեւ Կիրակի օր փակուած պիտի մնան նաեւ Այսրոյորդանի միացնող կամուրջն ու կապալի եւ Եգիպտոսի միջեւ գտնուող Ռաֆահի անցքը:

Քաղաքական գետնի վրայ, Իսրայէլ երեկ յայտարարեց, որ պատրաստ է ընդունելու Միացեալ Նահանգներու կողմէ իրապարակուելիք խաղաղութեան ձամբում անփոփոխ քարտէսը:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը Երեքշաբթի օր հարուած մը տուաւ Իսրայէլի, երբ յայտարարեց, որ խաղաղու

թեան ձամբում քարտէսը բարեփոխութիւններու պիտի չենթարկուի: Իսրայէլ պահանջած էր, որ ծրագիրը բարեփոխուի: Փաուլը ըսաւ սակայն, որ Միացեալ Նահանգներու, Եւրոպական Միութեան, Ռուսիոյ եւ ՄԱԿի կողմէ պատրաստուած քարտէսը անփոփոխ պիտի իրապարակուի, երբ պաղեստինցի նոր վարչակազմը կառավարութիւն կազմէ: Կր նախատեսուի, որ վարչապետ Մահմուտ Ապպաս՝ Ապու Մազէն եւ անոր կազմելիք դահլիճը յառաջիկայ շաբթուան մէջ ապահովեն խորհրդարանի վարչապետն ու վստահութեան քուէն:

Իսրայէլ թէեւ կարգ մը փոփոխութիւններ կը պահանջէ, սակայն միեւնոյն ատեն կը խուսափի Ուաշինգթոնի հետ ձակատումէ մը: Այս պատճառով է, որ արտաքին գործոց նախարարութիւնը պատրաստակամութիւն յայտնեց ընդունելու քարտէսը:

(ԱՅՓ)

### ՏՈՒՄԱՆ ԿՐ ԴԱՏԱՊԱՐՏԷ ՈՒԱՇԻՆԿՈՐԸ

ՄՈՍԿՈՒԱ, 16 (ԱՅՓ).- Ռուսիոյ խորհրդարանը Միացեալ Նահանգները դատապարտեց սահմաններուն մօտ զինուորական ներկայութիւն հաստատելու մտադրութիւն ունենալու յանցանքով: Ռուս երեսփոխանները որդեգրեցին բանաձեւ մը, որ «ոչ բարեկամական քայլ» մը կը նկատէ Միացեալ Նահանգներու եւ Ռուսիոյ սահմանակից վրաստանի միջեւ վերջերս ստորագրուած զինուորական համաձայնութիւնը:

Համաձայնագիրը, որ Մարտին վաւերացուած էր վրաստանի խորհրդարանին կողմէ, հսկայական առանձնաշնորհումներ կու տայ ամերիկեան ուժերուն, որոնք կրնան անկաշկանդ գործածել վրաստանի ցամաքային, օդային եւ ծովային տարածքները:

Ռուսական խորհրդարանը հաստատեց, որ համաձայնագիրը դուրս կու գայ գործակցութեան բնոյթին դառնալու համար միջոց մը, որ կ'ամրապնդէ ամերիկեան զինուորական ներկայութիւնը Կովկասի մէջ:

### ԻՎԱՆՈՎ ԵՒ ԱՆԱՆ ԿՐ ՊԱՀԱՆՁԵՆ, ՈՐ ՄԻՋԻՆ ԱՐԵԻԵԼՔԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ «ՃԱՄԲՈՒ ՔԱՐՏԵՍ»Ը ՀՐԱՊԱՐԱԿՈՒԻ ԵՐԲ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԱԶՄԵ ԻՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Երեկ, Աթէնքի մէջ, Եւրոպական Միութեան վեհաժողովին մասնակցող Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իվոյր Իվանով եւ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան ունեցան առանձին քննակցութիւն մը, որուն ընթացքին անոնք դիտարկեցին, որ Միջին Արեւելքի խաղաղութեան «ձամբում քարտէս»ը իրադարձութիւն միայն այն պարագային, որ երբ ռազմագիտական իշխանութիւնը կազմած կ'ըլլայ իր կառավարութիւնը, գործիքի գլխատրէ վարչապետ Մահմուտ Ապպաս:

### ԱԶՐՊԵՅՅԱՆԻ ՄԷՋ ՀԱՆԳԻՊՈՒՄ՝ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԷՋ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԴԵՍՊՈՒՆԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ

Ապրիլեանի նախագահ Հայտար Ալիե Պաքուի մէջ հանդիպում ունեցած է Ապրիլեանի, վրաստանի եւ Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպաններ Ռու Ռիչարդս, Ռիչարտ Մայլի եւ ձոն Օրտուէյի հետ, որոնք Պաքուի մէջ կը գումարէին Հարաւային Կովկասի երկիրներու մէջ ամերիկեան դիւանագիտական ներկայացուցչութիւններու ղեկավարներու ընթացիկ հանդիպումը: Ապրիլեանական լրատու աղբիւրներու համաձայն, քննարկուած են շրջանային իրավիճակին, անվտանգութեան, ահաբեկչութեան դէմ պայքարին, Լեռնային Ղարաբաղի եւ Աբխազիոյ տագնապներուն առնչուող հարցեր:

ՅԱՌԱՋԻՎԱՅ 2-3 շաբաթներուն ընթացքին, Ապրիլեանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ալիե պիտի այցելէ Միացեալ Նահանգներ: Այցելութեան հարցը քննարկուած է Ապրիլեանի նախագահ Հայտար Ալիեի եւ Ապրիլեանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Սաֆար Ալիեի միջեւ վերջերս կայացած հանդիպումին ընթացքին: Ամերիկացի դիւանագետ յայտնած է, թէ Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարար Տոնալտ Ռամսֆելտի իրաւերը արդէն փոխանցուած է Ալիեի:

VISION CARE CENTER  
Knajjian Optical  
Our answers to your questions on customized progressive lenses.  
Comprehensive eye care  
Specialized progressive lens services  
Doctor supervised contact lens fitting  
Address: Autoroute Jdeideh, behind Almaza Beer factory facing McDonald's Restaurant, Yara Center, First Floor.  
Tel: 01-877740. Fax: 01-375242. E-mail: knajjian@hotmail.com